ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/28

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 26.02.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ն 26.02.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բեռնատարների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Աճուրդի թիվ 2-րդ չափաբաժնի մասով 28.01.2019թ. մասնակցել է հակադարձ աճուրդին և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որից հետո Աճուրդի 3-րդ չափաբաժնի մասով հակադարձ աճուրդը շարունակվել է 29.01.2019թ., որի ընթացքում մեր ընկերությունը «eauction.armeps.am» համակարգի խափանված լինելու պատճառով (էկրանին հայտնվել է պատուհան, որտեղ նշված է եղել հետևյալը. «Սերվերի

ներքին սխալ, սերվերը բախվել է անսպասելի հանգամանքների հետ, որոնք խոչընդոտում են հարցման իրականացմանը»:) չի կարողացել համակարգ մուտքագրել վերջին, ավելի ցածր գնային առաջարկը, այն դեպքում, երբ չափաբաժնի ավարտին մնացել էր 4 րոպե:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ն համակարգի ոչ լիարժեք, թերի աշխատելու պատճառով զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Ավելին, նման պայմաններում Պատվիրատուն կարող է կնքել պայմանագիր ավելի բարձր գին առաջարկած մասնակից հետ, ինչը էական վնաս կպատճառի բյուջեին և կհանդիսանա բյուջեի միջոցների անհիմն վատնում:

Նման փաստական հանգամանքների պայմաններում, գտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բեռնատարների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչ էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի

պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

«ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

Պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բեռնատարների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել նշված էլեկտրոնային աճուրդը՝ թիվ 3 չափաբաժնի մասով:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 07.03.2019թ. թիվ 9773-19 գրությամբ Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը

«Ի պատասխան Ձեր 26.02.2019թ. №ԳԲԽ-ԷՍ/1/3085-19 գրությանը հայտնում եմ, որ էլեկտրոնային աճուրդի համակարգից (այսուհետ՝ Համակարգ) արտատպված տարբերակից հստակ երևում է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃՁԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով հակադարձ աճուրդը սկսվել է 28.01.2019թ., ժամը 11:00-ին, ընդ որում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը վերջին գնային առարաջարկը ներկայացրել է 28.01.2019թ. ժամը 11:29:25-ին: 29.01.2019թ. հակադարձ աճուրդ տեղի է ունեցել միայն 7-րդ չափաբաժնի մասով, որտեղ «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Իսկ ինչ մնում է բողոքաբեր կազմակերպության այն պնդմանը, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջները, որն էլ հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի ոչ լիարժեք

իրականացմանը՝ գտնում ենք, որ բողոքաբեր կազմակերպության պնդումը անհիմն է, քանի որ նույնիսկ, եթե Համակարգը խափանվել էր գնահատող հանձնաժողովը չէր կարող տեղյակ լիներ այդ մասին, բացի այդ Հակադարձ աճուրդն ավարտվելուց հետո Համակարգի կողմից ավտոմատ կերպով կազմվել է ամփոփաթերթ՝ համաձայն, որի «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ն 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից, որից հետո միայն հանձնաժողովը շարունակել է իրականացնել Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված գործառույթները:»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ի կողմից 26.02.2019թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ բեռնատարների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ն:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով սահմանվել է՝

- հրապարակման ժամանակ 10.01.2019թ. ժամը 10:03:42,
- հայտերի ընդունման վերջնաժամկետ 25.01.2019թ. ժամը 11:00:00,
- հակադարձ աճուրդ 28.02.2019թ. ժամը 11:00:00:

«ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ն 26.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 2-րդ չափաբաժնի մասով 28.01.2019թ. մասնակցել է հակադարձ աճուրդին և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, իսկ 3-րդ չափաբաժնի համար չի կարողացել մուտագրել վերջին ավելի ցածր գնային առաջարկը՝ համակարգի խափանված լինելու պատճառով, և այն դեպքում, երբ չափաբաժնի ավարտին դեռևս չորս րոպե մնացել էր:

Ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 15-րդ կետով՝ Բողոքներ քննող անձը 05.03.2019թ. գրությամբ դիմել է էլեկտրենային աճուրդի E-auction համակարգը սպասրկող «Ավռոմիկ» ՍՊԸ-ին՝ խնդրելով «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ի կողմից 26.02.2019թ. ներկայացված բողոքի քննության նպատակով իրականացվող նիստերին ապահովել էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձի մասնակցությունը:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ «Ավռոմիկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված կարճապատկերումը, որտեղ էկրանին հայտնվել է պատուհան, որում արտացոլված է, որ սերվերի ներքին սխալ է եղել, տվյալը պատուհանը հայտնվել է ոչ թե E-auction համակարգի «աճուրդ» բաժնում, այլ՝ «մանրամասներ» բաժնում և հավելեց նաև, որ 28.01.2019թ. համակարգում որևէ ծրագրային խափանում չի եղել:

Միաժամանակ «Ավռոմիկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց E-auction համակարգից արտատպված կարճապատկերումը, որտեղ երևում է, որ 28.01.2019թ. ժամը 11:29:58 րոպեին, այսինքն Աճուրդի ավարտից 1 րոպե առաջ «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ն գտնվել է «աճուրդ» բաժնում:

Բողոքներ քննող անձին այն հարցին, որ եթե համակարգի բաժիններից որևէ մեկում սերվերի ներքին սխալ է տեղի ունենում, արդյոք դա նշանակում է, որ համակարգի մնացած բաժինները այդ պահին նույնպես խափանվում են, «Ավռոմիկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պատասխանեց, որ եթե բաժիններից որևիցե մեկում խափանում է տեղի ունենում դա չի նշանակում, որ մնացած բաժինները ևս խափանվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 42-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը ամփոփվում (փակվում) է հետևյալ պայմաններից մեկի կամ դրանց համատեղ առկայության դեպքում.

1) հրավերում նշված կոնկրետ պահի.

2) սպառվել է աճուրդին մասնակցելու հրավերում նշված աճուրդի փուլերի քանակը.

3) նոր գներ այլևս չեն ներկայացվել: Այդ դեպքում աճուրդին մասնակցելու հրավերում պատվիրատուն նշում է վերջին առաջարկությունն ստանալուց մինչև էլեկտրոնային աճուրդի փակումն ընկած թույլատրելի ժամանակահատվածը:

• 2-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն, նույն օրենքով սահմանված կարգով, պայմանագիրը կնքում է էլեկտրոնային աճուրդի արդյունքների հիման վրա՝ ընտրված մասնակցի հետ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ բեռնատարների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-4/2 ծածկագրով հակադարձ աճուրդի ավարտը եղել է 28.01.2019թ. ժամը 11:30:00-ին:

- էլեկտրենային աճուրդի E-auction համակարգը սպասարկող «Ավռոմիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված եզրակացության համաձայն՝

1. «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ի էկրանին հայտնված պատուհանը, որում արտացոլված է եղել՝ սերվերի ներքին սխալ, տվյալը պատուհանը հայտնվել է ոչ թո E-auction համակարգի «աճուրդ» բաժնում, այլ՝ «մանրամասներ» բաժնում:

2. «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ն 28.01.2019թ. Աճուրդի ավարտից 1 րոպե առաջ գտնվել է E-auction համակարգի «աճուրդ» բաժնում:

3. E-auction համակարգում 28.01.2019թ. որևէ ծրագրային խափանում չի եղել:

Այսպիսով, հաշվի առնելով, որ Ընկերության կողմից 26.02.2019թ. բողոքով ներկայացված փաստարկները չհիմնավորվեցին և չներկայացվեց որևէ ապացույց այն մասին, որ 28.01.2019թ. հակադարձ աճուրդի ընթացքում էլեկտրոնային աճուրդի համակարգը աշխատել է խափանումներով, ուստի Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ի կողմից 26.02.2019թ. բողոքով ներկայացված փաստարկներն անհիմն են:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԼԱՎ ԸՆԿԵՐ» ՍՊԸ-ի կողմից 26.02.2019թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ